Ծանոթագրություններում բերված ձեռագրերի համարները Երևանի Կոմիտասյան դիվանի (Հայաստանի Հանրապետության Գրականության և արվեստի բանգարան) քարտագրության մեջ ընդունված համարներն են:

ԽՍԹԵՐԳԵՐ

Պատարագ (1899-01թ., Էջմիածին)

Պատարագի այս տարբերակը մշակվել է զուտ կիրառական-արարողական նպատակով և հատկացված է եղել Շեմարանի քառաձայն երգչախմբի կատարման համար (երգչախմբի կազմը հեղինակը չի նշել. ըստ երևոյթին նախատեսել է տղաների երկայն խմբի՝ դիսկանտների և տենորների ու բասերի համար):

Կոմիտասի նամակներում կամ նրա ժամանակակիցների հիշողություններում, ցավոր, չկա որևէ հարևանոցի ակնարկ այս Պատարագի ստեղծման և կատարման տարերվերի վերաբերյալ: Ուստի, եթե Պատարագի մյուս տարբերակների գոյացման տարերվերը թիշ թե շատ կատահեկի աղբյուրներից են, ապա այս մեկի ստեղծման ժամանակի վերաբերյալ մենք կարող ենք սոսկ ենթադրություններ անել: Կասկածից վեր է միայն, որ Պատարագը մշակվել է Էջմիածնում՝ 1899-ին Գերմանիայից վերադարձալուց հետո: Այդ է վկայում այս Պատարագի երգերից մի բանիը պարունակող ձեռագիր մի տետր (1645), որի կազմի վրա հեղինակի ձեռքով արված է հետևյալ նշումը՝ «Մանրանը. Կոմիտաս վարդապետ, 1897-99, Բեռլին»:

Եվ իրոք, 1899-ին զալով Էջմիածին և վերստին ստանձնելով Շեմարանի երաժշտության ուսուցիչ պարտականությունները, Կոմիտասն իր առաջնահերթ գործերից մեկը պետք է համարեր Շեմարանական խմբի համար նոր Պատարագ գրելը: Մայր տաճարում հնչեցնելու համար ստեղծված այս երկը, բնականաբար, Պատարագի արարողությունը պետք է ընդգրկեր ամբողջապես: Առայժմ մեզ հաջողվել է հայտնաբերել մոտավորապես այդ ժամանակահատվածում գրված և, ըստ երևոյթին, այս Պատարագի մասնաւոր կազմող 10 կտոր միայն: Առանձին պատառիկների տեսքով սևագիր վիճակում մեզ հասած այս երգերը, իհարկե, Պատարագի ամբողջական պատկեր ստեղծել չեն կարող, և խոսել այս երկի երբեմնի գեղարվեստական ամբողջության մասին, ցավոր, դեռ հնարավոր չեն: Պետք է շարունակել փնտրել: Բայց եթե նույնիսկ չհայտնաբերվեն մնացած կտորները, ապա եղածն էլ բավական է, որ մի ընդհանուր գաղափար կազմվի եթե ոչ այս Պատարագի, ապա զո՞նե Կոմիտասի վաղ շրջանի ստեղծագործական ոճի վերաբերյալ:

Էջ 19 (458) «Խորհուրդ խորին»: Շարունակությունը մնացել է անավարտ.

1.

1.

Զար - չա - րա - նօր քն սուրբ Մի - ա - ծնին նո - րո - գե - ցան

Էջ 20(460/24) - «Այսօր ժողովեալ»:

Էջ 21(447/1) - «Սուրբ Աստուած»-ի հինգերորդ տակտը ունի տարբերակներ.

2.

1.2

1.2

ո - դոր - մեա մեզ. ո - դոր - մեա մեզ.

Էջ 21 (447/11p) - «Մարմին Տերունական»: Պահպանվել է նաև հետևյալ տարբերակը.

3.
Var. 1
[նր-գեն եւ ա - սեն ան-հան - գիստ բար - բա ռով. սուրբ, սուրբ, սուրբ, Stp զօ - րու - թեանց:]
Var. 2
Var. 3

Էջ 22 (1645/16p) - «Ամէն: Հայր Երկնաւոր»:

Էջ 23 (1645/16p) - «Որդի Աստուծոյ»:

Էջ 23 (1645/16p) - «Հոգի Աստուծոյ»:

Էջ 24 (1645/16p) - «Ըստամենայնի»:

Էջ 25 (1645/15p) - «Միայն սուրբ», «Յիսոս Քրիստոս»:

Էջ 26 (393/9p) - «Տէր, ողորմեա»:

Էջ 26 (ՄԲ 288/56) - «Տէր, ողորմեա»:

Պատարագ (1903-04 թթ., Էջմիածին)

Սեղ հասել է սևագիր վիճակում: Գրված է խառն խմբի համար՝ ցած սովորանոներով ու ալտերով:

Դատելով դաշնակման ոճից՝ վերաբերում է Կոմիտասի ստեղծագործական միջին շրջանին: Ստեղծման և կատարման ժամանակի մասին ոչինչ հայտնի չէ: Կա միայն մեկ տեղեկություն, որ հանդիպում ենք Կոմիտասի՝ 1904 թ. սեպտ. 12-ին Պ.Մոճոյանին գրված նամակում. «Առաջիկա շաբաթ, ամսի 25 և 26 կիրակեին Շեմարանի խումբը կերգե պատարագ (իմ գրածը)»: Չի բացառված, որ խոսքը պատարագի այս տարբերակի մասին է:

Պատարագի արարողությունը ընդգրկել է ամբողջապես, բայց առայժմ հայտնարերել ենք միայն այս յոթ կտորները՝ գրված ինքնագիր մի տեսրում (472):

Հետաքրքրական է, որ համարյա բոլոր յոթ երգերն ել գրված են միևնույն տոնայնության մեջ՝ ու մաժոր (իմենականում իջեցված 6-րդ աստիճանով): Բնականաբար, այսպես կատարվել չէր կարող: Նշանակում է՝ մշակել է շատ շտափ, սեղմ ժամկետներում՝ հետաքայում նորից անդրադառնալու միտումով: Բայց գեղարվեստական արժեքը դրանից բոլորովին չի տուժել: Երգերից մի քանիսը («Քրիստոս ի մէջ», «Ով է որպէս», «Յամենայնի»), կարելի է դասել Կոմիտասի լավագույն գործերի շարքին:

Էջ 27 (391/44p, 472/33) - «Եւ ընդ հոգույդ Քում»

Էջ 27 (472/33, 391/44p) - «Սուրբ Աստուծոյ»

- Էջ 28 (472/33) - «Յիշեա, Տէր»
 Էջ 28 (472/32) - «Փառը Ջեզ»
 Էջ 29 (472/32-31) - «Մարմին Տէրունական»
 Էջ 30 (472/31-30) - «Ով է որպէս»
 Էջ 32 (472/30) - «Կեցն Տէր», «Ջրիստոս ի մէջ»
 Էջ 33 (472/29-28) - «Սուրբ, սուրբ»
 Էջ 35 (472/27) - «Յամենայնի»

Հոգևոր խմբերգեր՝ կատարված 1905 թվի թիֆլիսյան համերգներում

Շեմարանական սաների քառաձայն երգչախմբի՝ 1905 թ. ապրիլի 1-ին և 3-ին Թիֆլիսի Գեղարվեստական Ընկերության սրահում կայացած համերգների երկացանկը հայտնաբերել ենք կոմիտասյան դիվանի 449 և 450 արխիվային միավորներում տարանջատ վիճակում պահպան ձեռագիր մի տետրում (տեսրի հիմնական մասը 449-ում է, բայց դրա սկզբնական մի քանի էջերը արխիվը մշակողի անփութության հետևանքով ընկել են 450-ի մեջ՝ «Հայր մեր» և «Ալլուխա. Լերինք»):

Հեղինակի կողմից խնամքով համարակապած այս 14 խմբերգերի շարքում 1.6,7,8,9,10,11-ը Պատարագի երգերն են: Համերգային կատարման համար հատվածարար գրված այս Պատարագը, մեր կարծիքով, Կոմիտասի ակնարկած «7 տեսակի» ներդաշնակումներից մեկն է եղել:

Այս երկացանկի նշանակությունը մեզ համար ընդհանրապես շատ էական է: Եթե համեմատենք Կոմիտասի համերգների տարբեր ծրագրերը, ապա պարզ երևում է, որ Պատարագի երգերի ընտրությունը կատարելիս հեղինակը միշտ առաջնորդյունը տվել է հենց այս յոթ կենտրոնական երգերին: 1905-ից հետո կայացած համերգներում այս երգերը այլ դաշնակումներով մշտապես ընդգրկվել են:

Հետաքրքրական է, որ Թիֆլիսի համերգից դեռ շատ առաջ՝ Բեռլինում ուսանելու տարիներին Կոմիտասը Պատարագի երգերի մի այսպիսի ընտրություն արդեն կատարել էր. գերմանաներն թարգմանված խոսքերով Պատարագի երգերի այս նույն շարք (բացի «Խորհուրդ խորին» և «Ամէն: Հայր սուրբ» երգերի) նաև պատրաստել էր Բեռլինում կայանալիք հոգևոր համերգի համար (բերված է ներկա հաստորի 195-220 էջերում): Ինչպես տեսնում ենք, Բեռլինում նշմարվել իսկ տարիներ անց Թիֆլիսում վերջնականապես հաստատվել է համերգային կատարումների համար ընտրված Պատարագի երգերի այս շարք:

Թիֆլիսի համերգից քիչ անց, 1906 թ. Փարիզի համերգի համար Կոմիտասը պատրաստել է «Խորհուրդ խորին», «Հայր մեր» և «Տէր ողորմեա» երգերի իր մշակած նոր տարբերակները, իսկ դրանից ևս մեկ տարի հետո՝ կաթողիկոս Մ.Խրիմյանի հոգեհանգստի արարողության ժամանակ հնչել են «Խորհուրդ խորին», «Սարմին տէրունական», «Վասն յիշատակի», «Ամէն: Հայր սուրբ» և «Տէր ողորմեա» երգերի՝ արական երգչախմբի համար գրված բոլորովին նոր տարբերակները (տես ներկա հաստորի 71-76 էջերը): Վերջապես, «Գուսան» երգչախմբի խառն և արական կազմերի համար գրված այս երգերի ուշ տարբերակները հանդիպում են Կ.Պոլսի շրջանի համերգային ծրագրերում (բոլոր տարբերակների վերաբերյալ մանրամասն ասված է ԵԺ 7-րդ հաստորի Ծանրագրությունների բաժնում, տես նաև ներկա հաստորի 77-90 էջերը):

Թիֆլիսի համերգում կատարված Զօրօրինյաց «Ով զարմանալի» և «Այսօր ձայնն հայրական» երգասացությունների քառաձայն մշակումները գրեթե նույնությամբ հնչել են 1906 թ. Փարիզի համերգում: Իսկ ավելի ուշ, 1914-ին դարձյալ Փարիզում կատարվել են դրանց պոլյան տարբերակները: Նշված երկու ստեղծագործությունները, ինչպես նաև «Ըզ-Ջեզ օրիննեմք» և «Աստուածածին երկնային» խմբերգերը առաջին անգամ հրատարակվել են Փարիզի կոմիտասյան խնամատար հանձնաժողովի ջանքերով՝ «Տաղը և Ալլուխ» կոչվող ժողովածուում:

Թիֆլիսի համերգի երկացանկի ներկա հրատարակությունը իրականացնելիս բացառապես օգտվել ենք հեղինակային բնագրերից (449,450): Պատարագի երգերը և թ. 2,5,12 խմբերգերը հրատարակվում են առաջին անգամ:

- էջ 37 (450/1) - «Հայր մեր»
 էջ 38 (450/2) - «Ալելուիա. Լերինք»
 էջ 40 (449/10) - «Ով զարմանալի»
 էջ 41 (449/10) - «Այսօր ձայնն հայրական»
 էջ 42 (449/10թ) - «Էջ Սիածինն ի Հօրէ»
 էջ 44 (449/10թ) - «Խորհուրդ խորին»
 էջ 45 (449/13, 13թ) - «Փառք Քեզ», «Սուրբ, սուրբ»
 էջ 49 (449/9) - «Յամենայնի», «Ամէն: Հայր սուրբ»
 էջ 51 (449/9թ, 449/9թ- 11) - «Տէր, ողորմեա», «Աշխարհ ամենայն»
 էջ 52 (449/11-11թ) - «Ծպ Քեզ օրհնեմք»
 էջ 55 (449/11թ-12) - «Աստուածածին երկնային»

Հոգևոր երգեր՝ կատարված 1906 թվին փարիզյան համերգում

Թիֆլիսի համերգից անմիջապես հետո, 1906 թվականի դեկտեմբերի 1-ին Փարիզում կայացավ հայ գեղուկ և հոգևոր երաժշտությանը նվիրված Կոմիտասի մեծ նվազահանդեսը: Կոմիտասյան հանճնաժողովի ջանքերով 1946 թվականին Փարիզում լույս տեսած «Տաղը և Ալելուր» խորագիրը կրող ժողովածուում հրատարակվել են համերգում կատարված հոգևոր վեց խմբերգից երեքը: Ժողովածուի «Յառաջարան»-ում կարում ենք. «Ներկայ հաւաքածուն կազմած ենք հայ եկեղեցական երաժշտության գեղեցիկ էջերով,զոր Կոմիտաս վարդապետ ընտրած,զուած,ձայնագրած ու դաշնակած է:»

Սուածին չորս խմբերգերը՝ «Երգ գիշերային ժամու» (Յիշեցութ), «Հայր մեր» (Աղոքք Տերունական), «Երգ Զրորինեաց» (Ով զարմանալի), «Շարական Զրորինեաց» (Այսօր ձայնն հայրական), քաղած ենք այն բազմազրուած տեսրէն, որուն բնատիպը Կոմիտաս վարդապետ իր իսկ ձեռորվ գրած էր տրուելու համար բոլոր անդամներուն ֆրանսիացի ու հայ երգիչներէ բաղկացած խումբին որ կազմվեցաւ հայ ժողովրդական ու կրօնական երաժշտութեան մեծ համերգին համար զոր Կոմիտաս վարդապետ, աջակցութեամբ «Փարիզի Հայկական Սիուրեան», սարքեց Փարիզի մեջ 1906-ի վերջերը: Այդ համերգին մէջ, ուր Արշակ Չոպանեան արտասանեց ֆրանսներէն բանախօսութիւն մը հայ ժողովրդական երաժշտութեան ու բանաստեղծութեան մասին եւ հայ տոհմային երաժշտութեան վերահաստատման ու զարգացման գործին մէջ Կոմիտասի կատարած էական դերին վրայ, վարդապետը իբր երգայարդար, իբր խմբապետ եւ իբր երգիչ զնայլեցուց բոլոր ունկնդիրները, եւ այդ համերգը, ուր իբր սօխնը իրեն փայլուն կերպով աջակցեցան Շահ-Մուրատեան եւ Մուղունեան երգիչները, օրիորդ Մարգարիտ Բարայեան երգոսին եւ օրիորդ Շուշիկ Բարայեան դաշնակահարուիհին, հմայիչ յայտնութիւն մը եղաւ ֆրանսիացի երաժշտներուն, երգահաններուն, երաժշտական ըննադատներուն եւ երաժշտասէրներուն համար, որոնք ներկայ էին, եւ հայ երաժշտութիւնը զերմօրէն դրուատող յօդուածներ երեւան այդ առթիւ փարիզեան թերթերէն ունաց մէջ»:

«Յառաջարան»-ում ակնարկված «բազմազրուած տեսր»-ը հայտնարերեցինք կոմիտասյան դիմանում (624): Վիմագրական եղանակով Փարիզում բազմազրուած այս տեսրը իրոք նախատեսված է եղել ֆրանսիացի և հայ երգիչներից կազմված այլովեսինալ երգչախմբի անդամների համար. լատինատառ հայերէնով գրված երգերի խոսքերը դրա վկայությունն են:

Տեսրի և «Տաղը և Ալելուր»-ի համեմատությունից երևում է, որ Փարիզյան հրատարակությունը, հիմնականում, արված է մեծ բարեխսղությամբ: Գլխավոր խմբագիր Վարդար Սարգսյանը ձեռքի տակ ունենալով կոմիտասյան բնագիրը, ընդհանուր առմամբ վերարտադրել է այն հավատարմորեն: Սիայն թե առայժմ պարզ չէ, թե ինչու չի հրատարակել Պատարագի կենտրոնական «Խորհուրդ խորին» և «Տէր, ողորմեա» երգերը, որոնք տեսրում կրում են 20 և 9 համարները և հաստատապես կատարվել են համերգի ժամանակ: Պարզ չէ նաև, թե ինչու է «Տաղը և Ալելուր»-ում հրատարակված «Այսօր ձայնն հայրական» Զրորինյաց երգը վերցված ոչ թե Կոմիտասի

փարիզյան տեսրից, ինչպես սխալմամբ նշված է ժողովածուի «Յառաջարան»-ում, այլ բոլորովին այլ ձեռագրից (449/7), որ Կ.Պոլսի շրջանի գործերից է:

Համերգում հնչած հոգևոր խմբերգերի ներկա հրատարակությունը իրականացրել ենք բացառապես հիմք ընդունելով Կոմիտասի փարիզյան տեսրը, որում երգերի հաջորդականությունը հեղինակային համարակալումով ունի հետևյալ տեսքը՝

- թ. 7 Հայր մեր
- թ. 9 Տէր, ողորմեա
- թ. 10 Յիշեսուք ի գիշերի
- թ. 20 Խորհուրդ խորին
- թ. 21 Ով զարմանալի
- թ. 22 Այսօր ձայնն հայրական

Տեսրի մնացյալ պարունակությունը (բաց թողնված համարները) հայ գեղջուկ երգերի խմբերգային մշակումներն են: Հրատարակվել են Կոմիտասի ԵԺ 2-րդ հատորում:

1907 թ.

**Կաթողիկոս Սկրտիչ Խրիմյանի հոգեհանգստի արարողության համար
պատրաստած Պատարագի հատվածները**

Կոմիտասի ԵԺ նախորդ՝ 7-րդ հատորում խոսվել է Պատարագի այս տարբերակի մասին: Այստեղ նորից կրկնենք, որ Պատարագի արական-խմբերգային տարբերակ ունենալու Կոմիտասի զաղափարը ծագել է անհրաժեշտարար, 1907 թվականին արժանահիշատակ Սկրտիչ Խրիմյան կաթողիկոսի մահվան կապակցությամբ: Եջմիածնի Մայր Աքոռում ձեռնարկվող սգո հանդիսավոր արարողություններից մեկը, բնականաբար, հոգեհանգիստը պետք է լիներ: Այդպիսի արարողության երաժշտական «սպասարկումը» հաճանարարված էր Կոմիտասին: Հետաքրքրական է, որ այս դեպքում Մ.Եկմայլյանի՝ արական երգչախմբի համար գրված եռաձայն կամ քառաձայն պատարագներն օգտագործելու հարց չի ծագել: Կարելի է ենթադրել տարբեր պատճառներ. Կոմիտասի երկարատև բացակայության հետևանքով¹ Շեմարանի աշակերտները երգեցողությունից ետ են մնացել և Եկմայլյանի պատարագների կատարումը նրանց համար կարող էր դժվար լինել, մինչդեռ կոմիտասյան եղանակներին նրանք ընդհանուր առմամբ ծանոթ են, կամ, որ ավելի հավանական է, քազմաձայն պատարագի ներդաշնակային ոճի նկատմամբ Կոմիտասն ուներ իր սեփական՝ Եկմայլյանի Պատարագից խիստ տարբեր մոտեցումներն ու պահանջները և, կամ, տվյալ առիթով («հավուր պատշաճի ») հատուկ պատարագ ստեղծելը Մայր Աքոռի և ենու Կոմիտասի կողմից կարող էր դիտվել որպես կաթողիկոս Խրիմյանի նկատմամբ մի առանձին հարգանքի տուրք:

«Թեպետ ես Պատարագն ունիմ ամբողջապես գրված, բայց խառն խմբի համար է: Այժմ Շեմարանում փոքր աշակերտներ չկան, որովհետև Ա և Բ դասարանները փակ են: Ուրեմն, գործը պետք էր սկսել մեծ աշակերտների միջոցով միայն, պետք էր նոր Պատարագ գրել արական խմբի համար...: Ամբողջ մեկ շաբաթ (Մ.Խրիմյանի մահվան օրվանից մինչև քաղման օրը՝ Դ.Դ.) օրական 14 ժամ գրադպելով (6 ժամ տանը պատրաստում էի, 8 ժամ Շեմարանում ծայն առ ծայն պարապում ու սովորեցնում), գլուխ հանեցի գործը...», գրել է նա Մ.Քարայանին:

«Արարատ» հանդեսի՝ Խրիմյանին նվիրված հոկտեմբեր-նոյեմբերյան հավելվածում գրված է. «Կյուրակի, նոյեմբերի 4-ի պատարագին եկեղեցին լցված էր խուռն քազմություն, և Կոմիտասի նոր պատրաստած խոմքը յուր ներդաշնակ երգեցողությամբ օրվան տիսուր հանդիսավորությունը դարձնում էր ավելի վսեմ ու սրբազն»:

Արական երգչախմբի համար գրված այս Պատարագը որպես ամբողջություն չի պահպանվել: Մինչդեռ, եռանդով ու նվիրումով գլուխ քերված այդ գործը կոմպոզիտորի ստեղծագործական կենսագրության մեջ չպետք է դառնար մի անցողիկ երևույթ, մի

¹ Նկատի ունենք 1906 թվականին Փարիզում անցկացրած ժամանակահատվածը:

«հերթական, պաշտոնական» պարտականության կատարում և հետագայում հենց իր կողմից մոռացության տրվեր: Պետք է ենթադրել, որ այս աշխատանքը Կոմիտասը լիովին կավարտեր, կիսմբագրեր ու կմաքրագրեր, և դա կներկայացներ նրա էական ստեղծագործություններից մեկը:

Մեզ հաջողվել է հայտնաբերել այդ Պատարագին հավաստիորեն պատկանող հատվածներ: Դրանք են.

1. Խորհուրդ խորին (449/12)
2. Սարմին տէրունական (441/13թ)
3. Վասն յիշատակի (451/13, 14, 15)
4. Ամէն: Հայր սուրբ (451/16)
5. Տէր, ողորմեա (ԳԶ, Սեծի Պահոց) (Մթ 288/32)

Կոմիտասի ԵԺ 7-րդ հատորի ծանոթագրություններում նշվել էր, որ «Վասն յիշատակի» սրբաացության խոսքերում տեղ գտած մի անսովոր առանձնահատկության պատճառով (ավանդական «հանգուցելոց»-ի փոխարեն «հանգուցելոյ» է, «զիոնի նոցա»-ի փոխարեն՝ «զիոնի սորա») պարզ էր դարձել, որ հեղինակի կատարած այս ինքնական փոփոխությունն անկասկած կապված է 1907 թվականի կաքողիկոս Մ.Խրիմյանի հոգեհանգստի արարողության հետ:

Սրբաացության բնագիրը հայտնաբերվեց կոմիտասյան դիվանում, ինչ-որ ծոցատեսրից պոլկած թերթիկների վրա, որոնք, ի դեպ, ի եղինակի կողմից խնամքով համարակալված են (451/13-15): Հեղինակային համարակալումը կրող նույնատիպ թղթերի վրա, նույնապիս ձեռագրով և բանարով գրված հայտնաբերվեց նաև «Ամէն: Հայր սուրբ» երգը (451/29): Այժմ հաստատապես կարող ենք ասել, որ այն նույնապես գրված է 1907-ին (ցավով ասենք, որ նշված ծոցատեսրի 16-28 էջերը, որոնք մեր համոզմաք պետք է պարունակեին 1907-ի Պատարագին վերաբերող այլ հատվածներ, չնայած մեր եռանդուն որոնումներին, չհայտնաբերվեցին):

Մնացած երեք երգերի պատկանելությունը 1907-ի Պատարագին ապացուցվում է նրանով, որ դրանք հաստատապես գրված են մինչպոլսյան շրջանում, բայց 1905 թ. Թիֆլիսի և 1906 թ. Փարիզի համերգների համար պատրաստած պատարագների երգերից հետո, և, դրանով իսկ, նախատեսված են եղել արական երգչախմբի Պատարագի հենց այս տարբերակի համար (հայտնի է, որ մինչև 1907 թվականը Կոմիտասը արական երգչախմբի համար գրված պատարագ չի ունեցել):

«Վասն յիշատակի» սրբաացությունը և «Տէր, ողորմեա»-ն (ԳԶ)գետեղված են ԵԺ նախորդ հատորի Հարակի երգերի (Եջ 92) և Տարբերակների (Եջ 110) բաժիններում (տեսն նաև դրանց, ինչպես նաև «Ամէն: Հայր սուրբ» երգի ընդհանուր ծանոթագրությունները նույն տեղում): Կոմիտասյան պատարագների ամբողջական պատկերը պահպանելու նպատակով դարձյալ թերում ենք ներկա հատորում՝ փոքր ինչ լրացված և խմբագրված տեսքով:

(Այս ծանոթագրությունում օգտագործված են Ռ.Աքայանի նշումները.- Դ.Դ.)

**«Գուսան» երգչախմբի երկսեռ կազմի կատարման համար գրված
Պատարագի հատվածները (Կ.Պոլիս, 1910-15 թթ.)**

1910 թվականի ամռանը Կոմիտասը տեղափոխվեց Կ.Պոլիս: Այստեղ նա ստեղծեց իր բազմամարդ (մինչև 300 հոգի) երկսեռ «Գուսան» երգչախումբը: Կոմիտասը, որ նաև առաջնակարգ խմբավար էր, չէր կարող գերծ մնալ այդպիսի երգչախմբով հայկական Պատարագի երգերը ևս հնչեցնելու գայթակղիչ գաղափարից: Եվ իրոք, Կ.Պոլսում կայացած նրա 1910-11 թթ. համերգների բոլոր հայտագրերում Պատարագի երգերը նշված են երկսեռ խմբի կատարման համար: 1912 թ. դեկտեմբերին, նոր, ավելի խիստ ընտրություն կատարելով «Գուսան» երգչախմբում, Կոմիտասը Մ.Քարայանին գրում էր, թե՝ «Այս տարի սովորեցնում եմ Հարսանիքի երգերը գլխավորապես, մի քանի խմբերգեր

Վազմերեն ու Վերդիեն և իմ մեծ ու լնդարձակ Պատարագը, որ հույս ունիմ այս Զատկին երգել տալու, որից անցել եմ մինչև «Սուրբ, սուրբ»-ը և շատ հաջող է առաջ գնում»:

Դարձյալ ստոյգ չենք կարող ասել՝ եղել է այս «մեծ ու լնդարձակ Պատարագը» որպես մի վերջացված ամբողջական ստեղծագործություն, թե, ինչպես նախորդ Պատարագներից մի քանիսը, գրված է եղել հատվածաբար, համերգային կատարումների համար: Կոմիտասյան դիվանում հայտնաբերված և հաստատավես այս Պատարագին վերաբերող կտորները, ցավոք, Պատարագի ամբողջական պատկեր չեն ստեղծում:

Մեզ հաջողվել է հայտնաբերել «Գուսան» երգախմբի երկսեռ կազմի կատարման համար գրված Պատարագի հետևյալ երգերը.

Ժառը Քեզ, Տեր (448/4)

Հայր մեր (448/68թ- 66)

Ամէն: Հայր սուրբ (Ա տարբերակ) (Մթ 288/10թ)

Ամէն: Հայր սուրբ (Բ տարբերակ) (446/1)

Ամէն: Հայր սուրբ (402/33)

Տեր, ողորմեա (Ա տարբերակ) (402/34-37)

Տեր, ողորմեա (Բ տարբերակ) (448/4թ- 4)

Սուրբ, սուրբ (402/12)

Սուրբ Աստուած (Ա տարբերակ)

Սուրբ Աստուած (Բ տարբերակ)

Սուրբ Աստուած (Երեկոյի)

Արական երգախմբի Պատարագում օգտագործված այս երգերի համապատասխան տարբերակների մասին խոսվել էր ԵԺ 7-րդ հասորի ծանրագրությունների քաժնում: Այստեղ ավելացնենք, որ Կոմիտասը իր Պատարագներում մշակել է «Ամէն: Հայր սուրբ» երգի երեք, միմյանցից խիստ զանազանող եղանակներ: Առաջին եղանակի երկու տարբերակներից մեկը բերված է նախորդ հատորի հիմնական մասում (էջ 66), մյուսը, որ առաջինի կարճեցված տարբերակն է՝ ներկա հատորում:

Եկմալյանի Պատարագի միջոցով առավել տարածված ու հայտնի երկրորդ եղանակը Կոմիտասը մշակել է մի քանի տարբերակով: Դրանցից վաղագույնը գրված է 1905-ի Թիֆլիսի համերգի համար, մեկ այլը՝ 1907-ին՝ կարողիկոս Սկրտիչ Խրիմյանի մահվան կապակցությամբ սպոն արարողությունների առիթով (բերված են ներկա հատորի 49-50 և 74-75 էջերում): Նույն եղանակի մեկ այլ տարբերակը՝ գրված «Գուսան» երգախմբի արական կազմի համար (ձայնատողերի վրա նշված մեներգիչների ազգանուններով), գետեղված է ԵԺ 7-րդ հատորի ծանրագրությունների քաժնում (էջ 166): Վերջապես, «Գուսան» երգախմբի խառն կազմի համար երկու տարբերակով մշակված երրորդ եղանակը (որն, ի դեպ, շատ հիշեցնում է հայ գեղջկական հոռովելների ելեւջները) բերված է ներկա հատորի հիմնական մասում:

«Տեր, ողորմեա» ավանդական երգը ներկա հատորում բերված է երկու տարբերակով՝ քառածայն և վեցձայն: Առաջինը գրված է պղսական համեմատաբար վաղ շրջանում, Կահիրեի 1911 թ. հունվարի 30-ի համերգի համար:

Բասերի առաջին ֆրագի վերջին հնչյունի մասին մանրամասն խոսվել էր նախորդ հատորում: Այստեղ նշենք, որ Պատարագի 1933 թ. հրատարակության խմբագիր Վարդան Սարգսյանը, ըստ երևույթին, երգի մշակման հենց այս տարբերակն է նկատի ունեցել, եթե հեղինակի գրած դու հնչյունը դարձրել է սի-թեմոլ:

Ինչ վերաբերում է վեցձայն տարբերակին, ապա այն լիովին նույնն է, ինչ որ արական երգախմբի համար գրվածը: Սովորանունների և ալտերի ձայնաբաժինները առանց որևէ էական փոփոխությունների հանձնարարելով տեսնորներին և բասերին, հեղինակը, պարզապես, հարմարեցրել է այն արական երգախմբի կատարման համար:

Կոմիտասի թթերում առայժմ հայտնաբերվել է խառն խմբի համար գրված հնագածայն «Սուրբ, սուրբ» երգի միայն սկզբնական հատվածը: Մայր մեղեղին նույնն է, ինչ որ արական երգախմբի Պատարագում օգտագործվածը (տե՛ս մանրամասն ծանրագրությունները ԵԺ 7-րդ հատոր, էջ 155-157):

«Սուրբ Աստուած» երգի երեք, միմյանցից խիստ զանազանվող եղանակներից առաջինը Ծննդյան, Խաչի, Հարության և Տեառնդառաջի տոններին երգվող նշանավոր մեղեղին է, որի բազմաձայն մշակումները Կոմիտասը օգտագործել է իր 1899-ի, 1904-ի և 1914-15 թթ. Պատարագներում:

«Երեկոյի Մեծի Ուրբարու» կամ «Խաչի Սուրբ Աստուած» կոչվող 2-րդ եղանակը և «Սուրբ Աստուած յերեկոյի» կոչվող 3-րդ եղանակը երգվում են երեկոյան ժամերգության ժամանակ:

Կոմիտասի դիվանում հայտնաբերված այս երկու երգերի բազմաթիվ մշակումներից ընտրել ենք այս երեք, մեր տեսակետից առավել կատարյալ տարրերակները: Ի դեպ, հենց սրանց միաձայն մայր-եղանակները 1914 թ. Փարիզում կայացած Երաժշտության Սիցազգային Համագումարի առթիվ Հայոց Եկեղեցում տրված համերգում ունիտն երգել է Մ.Բաբայանի աշակերտների խումբը: Առաջին անգամ հրատարակվել են «Տաղը և Ալելույ» ժողովածուում (էջ 18):

Էջ 81. Կոմիտասի նշումներից կարելի է կոռակել և այսպիսի վերջավորություն (Ռ.Ա.)

4.

Կոստանդնուպոլիս, 1910-1915 թթ.

Ոտնլուայի և Զրորինեաց երգեր

«Ոտնլուայի» երգերը որոշակի կազմությամբ երգաշար է: Հինգ երգերից կազմված այս շարը Կոմիտասի 1910-15 թթ. համերգների ծրագրերում հանդիպում է հետևյալ հաջորդականությամբ՝

ա. Այսօր կանգնեցաւ (բառաձայն երկսեռ խումբ և մեներգ Ս.Ակայան)

բ. Այս խորհուրդ լցաւ

գ. Տեր, Քոյին

դ. Ահա ազատեաւ

ե. Ահրտ իմ սասանի (մեներգ Արտ. Սեմերճյան)

Երգաշարն առաջին անգամ հրատարակվել է «Տաղը և Ալելույ» ժողովածուում մի էական թերությամբ՝ «Այսօր կանգնեցաւ»-ը, որը շարի սկիզբը պետք է լիներ (այդպես է 402 բնագրում), և որի նոտաները ունեցել են ժողովածուի խմբագիր Վ.Սարգսյանը, այստեղ, զգիտես ինչու, չկա, և դրա հետևանքով խախտված է երգաշարի ժանրային պատկերը: Իսկ հրատարակված չորս երգերն ել (բ,գ,դ,ե) կամովի միավորված են երկու ընդհանուր վերնագրերի տակ՝ Գանձ Ա (առաջին երեքը) և Գանձ Բ (վերջինը): Կոմիտասի բնագրերում և համերգների ծրագրերում դրանք առանձին վերնագրերով գրված ինքնուրույն երգեր են, ուստի, այդպես էլ հրատարակել ենք ներկա հատորում:

Զրորինյաց «Ով զարմանալի» տաղը և «Այսօր ձայնն հայրական» երգը Կոմիտասի համերգներում մշտակես ունեցել են իրենց հաստատուն տեղը, կատարվել են 1905 թ. Թիֆլիսի, 1906 թ. Փարիզի և 1910-15 թթ. Կ.Պոլսի համերգներում: Առաջին անգամ հրատարակվել են «Տաղը և Ալելույ» ժողովածուում, որի «Յառաջարան»-ից տեղեկանում ենք, որ «Ով զարմանալի» խմբերգի այս տարբերակը կատարվել է նաև 1914 թ. Փարիզում կայացած Երաժշտության Սիցազգային Համագումարի առթիվ Հայոց Եկեղեցում արված

համերգում, որին իրեն մեներգիշ մասնակցել է Կոմիտասը իր կազմած փոքր երգախմբով:

Խմբերգը, իրոք, քաղված է Կ.Պոլսի շրջանին վերաբերող 449 ձեռագրից և հավանական է, որ 1914-ին կատարվել է Փարիզում: Բայց «Այսօր ձայնն հայրական»-ի սկզբնադրյուրի մասին «Յառաջարան»-ում տված տեղեկությունը ճիշտ չէ: բնագրի և հրատարակվածի համեմատությունից երևում է, որ խմբերգը վերցված է ոչ թե 1906 թ. Փարիզի համերգի համար բազմագրված տեսրից (այդ տեսրում այս երգի մշակման բոլորովին այլ տարբերակն է), այլ դարձյալ Կ.Պոլսի շրջանին վերաբերող 449 բնագրից:

Զօրոհնյաց երգասացությունների ներկա հրատարակությունը իրականացնելիս հիմք ենք ընդունել Կոմիտասի դիվանի 449 բնագրը: Բերված երկու նմուշները Կոմիտասի ստեղծագործական ուշ շրջանը ներկայացնող մեզ հայտնի վերջին տարբերակներն են:

Էջ 91 (402/2) - «Այսօր կանգնեցաւ»

Էջ 93-99 (449/1-6թ) - «Այս խորհուրդ լցաւ», «Տեր, Քոյին», «Ահա ազատեա», «Սիրս իմ սասանի», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն»:

Դ.Դերոյան

Էմի Արգարի Պատարագի կոմիտասյան տարբերակը 1915 թ.: Կ.Պոլսի:

Կոմիտասի Պատարագներից այս վերջին տարբերակի մասին մասամբ ասված էր նախորդ՝ 1914-15 թթ. արական երգախմբի Պատարագի առիվ (ԵԺ 7-րդ հ., Խմբագրի կողմից) այն կարևոր պետությունով, որ այդ աշխատանքը կատարված է եղել նախորդին ավարտելուց անմիջապես հետո. բավական է ասել, որ Էմի Արգարի «Խորհուրդ խորին»-ի կոմիտասյան դաշնակումը գրված է 1914-ի «Խորհուրդ խորին»-ի էջերից մի երկուսի շրջերեսին: Ինչպես սա համոզվեցինք, որ դրանք հենց Էմի Արգարի մշակած Նոր-Չուղայի հայերի Պատարագի հատվածների կոմիտասյան մշակումներն են (Կոմիտասի բնագրերում այդ հարցը որոշող որևէ նշում, վերնագիր կամ սկզբնադրյուրի հղում չկա): Նաև մի ընդհանուր պատկերացումով, որ գոյացավ սրանց մեղեղիների ելեկային կառուցվածքի մասին, ինչը ընդհանուր առմամբ, նկատելիորեն տարբեր է թաշճյանական մեղեղիներից, ապա՝ համեմատելով Կոմիտասի ձեռովք գրված այդ «Խորհուրդ խորին»-ը և նոր գոնված մյուս հատվածները Էմի Արգարի տպագրությունների հետ:

Դժվար է այդ տարբերությունը ստույգ սահմանել. հարցը միայն առանձին ելեկային կառուցվածքների և ամբողջական եղանակների տարբերությունը չէ: Գլխավոր երգերից շատերը հենց Թաշճյանի գրառումներում ներկայացված են շատ և միմյանցից բավական տարբեր եղանակներով. ելեկային ընդհանուր տարբերությունը դրանցում, համեմայն դեպս, այնքան է, որ Էմի Արգարի օգտագործած եղանակները կարող են ընդունվել որպես Թաշճյանի նույն եղանակի թեկութեա հետափոր մի հերթական տարբերակ: Տարբերությունը որոշակիորեն ավելանում է Էմի Արգարի եղանակների յուրակերպ ոիթմիկայի, մասնավորապես տիրուների առատ օգտագործման շնորհիվ: Նման ոիթմով թեկութեա մեկ եղանակ Թաշճյանի գրառումներում չենք գտնում:

Այս եղանակների հարաբերությունը Թաշճյանի գրառումների հետ պատճական և ծագումնաբանական առումով մի ինքնուրույն, հետարքերական և կարևոր խնդիր է, որ այստեղ մեզ խիստ հեռու կտաներ: Ինչ վերաբերում է այն կարծիքին, ըստ որի Կոմիտասն այդ եղանակներն էր համարում առավել հարազատ հայկականին, այդ մասին մեզ հասած լուրերը թեև շատ վստահելի աղբյուրներից են (ինչպիսին, օրինակ, Կարո Ռիշակյանի հուշերն են), այնուամենայնիվ շշտապենք դա ընդունել որպես կոմիտասյան կարծիք՝ արտահայտված հենց այդ ձևակերպումով. այստեղ խոսքի, գործածված բառի բույլ երանցն անգամ կարող է վճռական փոփոխություն առաջացնել Կոմիտասի գնահատականի ընդհանուր բովանդակության մեջ:

Մի կարևոր տարբերություն (բացի ելեկային-կառուցվածքային-եղանակային տարբերություններից) անպայման պես է նշվի նաև հոգականության առումով. Թաշճյանի գրառումներում եղանակները (մեր խոսքը այն գլխավոր եղանակների մասին

է, որոնց Էմի Արգարի տարբերակները ևս հայտնաբերել ենք) համեմատաբար փոքր-ինչ ավելի բացահայտ հուզականություն դրսելող եղանակներ են, քան Էմի Արգարի եղանակները (նկատի ունենք նաև կոմիտասյան խմբագրումը):

Մեզ հաջողվել է (ժամանակային տվյալ պայմաններում) գտնել Էմի Արգարի Պատարագի Կոմիտասի կատարած դաշնակումների հետեւյալ համեմատաբար խոշոր կտորները.

1. Խորիուրդ խորին (Ժանրընթացը)
2. Այսօր տօն է Ծննդեան
3. Սուրբ Աստուած
4. Փառք
5. Սուրբ, սուրբ
6. Յամենայնի
7. Հոգի Աստուծոյ
8. Եղիցի

և մի քանի կիսատ վիճակում գտնված այլ հատվածներ: Ապա՝ բազմաթիվ Եւ ընդ հոգուոյ Քում, Առաջի Քո Տէր, Ասէ Աստուած, Ամէն, Օրհնեալ է Աստուած, Օրհնեա, Տէր, Աստուծոյ Երկրպագեացուր, Տէր, ողորմեա, Քեզ Տեառնդ յանձն եղիցուր, յուրաքանչյուրն իր տեղին կամ տեղերին համապատասխան:

Այսքանից կարելի՞ է արդյոք եզրակացնել, որ Կոմիտասն ավարտել էր իր Պատարագի Էմի արգարյան տարբերակը:

Սի բան պարզ է արտաքուստ, որ նա շտապով արել է այդ գործը ելնելով հետաքրքրությունից, ինչպես շտապով էր գրել նաև նախորդ Պատարագը: Ինչ վերաբերում է ավարտած լինելուն կամ չլինելուն, վարանում ենք նույնիսկ ենթադրություններ անել. պետք է շարունակել փնտրել:

Այս նոր գտնված հատվածները առանձնապես ցրված վիճակում են Կոմիտասի դիվանի ամենատարբեր թրերում, ինչպես նաև Մարգարիտ Բարայանի մոտ պահպանված կոմիտասյան սևագիր հատվածներում՝ առանց որևէ տեղեկացումների: Կասկածից վեր է միայն այն, որ էլի շատ բան դեռ պետք է հայտնաբերվի, և ոչ թե դիվանում առանձնապես, այլ այս ու այն մարդկանց մոտ, քննեցված վիճակում:

Չեզքի տակ ունեցած Էմի Արգարի դաշնակած և տպագրած կտորների և դրանց կոմիտասյան վերամշակումների համեմատությունից միանգամայն ակնհայտ է դառնում, որ Էմի Արգարը այդ եղանակները, որպես մի առաջին, խիստ կարևոր անհրաժեշտություն, որել է որոշակի տակտաչափերի մեջ և դրանով, ցավով ասենք, գրեթե անձանաշելի դարձրել: Արդեն այդ, մեծ մասամբ, կայուն տակտարաժանումից հրաժարվելուց հետո (ինչում դրսելորվել է Կոմիտասի սրաբավանցությունը) երևան են եկել դրանց հիմքում ընկած եղանակների համեստ, բայց որոշակի ազգային երանցները: Ըստ այնմ հստակ է դրանց կոմիտասյան ներդաշնակումը. ընդհանուր սկզբունքները նույնին են, ինչ որ նախորդ՝ արական երգչախմբի Պատարագում, բայց բուն մեղեդիների նման ներդաշնակությունը (հուզականության առումով) փոքր-ինչ «ժումկա» է- եթե կարելի է այդպես ասել: Այդ «ժումկալության» երանգը գեր քերելակի խախտված է վերը բվարկված մի բանի գլխավոր եղանակներում: Կոնպողիուրին հատուկ սրամիտ հնարավորություններով գտնված այլազան դաշնակումներ են գոյացել հատկապես վերը բվարկված կարճաշունչ աղորերգերում, մասնավանդ, որ այդ փոքր հատվածները հուզական-ոճական առումով կարող են այնքան էլ որոշակի, այնքան էլ «պատասխանատու» չլինել: Այս բանում տարածվելու լայն դաշտ է գտել նաև ընդհանրապես Կոմիտասի տարբերակասիրությունը:

Կոմիտասի «ժումկալության» երանգը որոշ չափով խախտված է նաև «Այսօր տօն է Ծննդեան» երգում իր մեծացված սեկունդա պարունակող ձայնակարգով, որ ինքն արդեն (այդպիսի կառուցվածք ունեցող ձայնակարգը) առաջ է քերում համեմատաբար ակտիվ, փոքր-ինչ ավելի բացահայտ հուզականություն:

Էմի Արգարի պահպանած նոր-ջուղայական եղանակների կոմիտասյան մշակման ու ներդաշնակման մասին քերես ապագայում ավելի լայն պատկերացում ստեղծվի, բայց

առայժմ, դարձյալ կրկնենք, պեսոք չէ շտապել վերջնական եզրակացությունների հանգելու, քանի դեռևս գտնված նյութը տակավին քիչ է և սոսկ սևագրություն է:

Սի բան միայն ավելացնենք, որ շեշտում է և գործի շտապ կատարումը, և անմիջական կապը Պատարագի նախորդ՝ արական տարրերակի հետ. «Խորհուրդ խորին»-ը ոչ միայն գրված է 1914-15-ի Պատարագի նույնանուն երգի շրջերեսին, այլև որոշակիորեն դրա ազդեցության տակ: Այստեղ Կոմիտասը կարծես արական երգչախմբի համար շատ պատշաճ է համարել երգը սկսել ոչ թե tenor-ներով, այլ bass-երով, որպեսզի այն հնչի ավելի ևս «ի խորուստ»:

Եմի Արգարի Պատարագի վրա գործադրած կոմիտասյան աշխատանքը մենք բարձր ենք գնահատում նաև այն բանի համար, որ դրանով նա ինքը, փաստորեն, առարկայորեն գնահատեց Եմի Արգարի հսկայածավալ գործը և բարձր արժեքավորեց լուրյան մատնված այդ երաժշտությունը թեկուզ միայն մեղեղիական նյութի առումով:

Ո.Աքայան

Եմի Արգարի պատարագի մեղեղիների հիման վրա գրված կոմիտասյան մշակումների հայտնաբերումը Ո.Աքայանի կողմից կարելի է խսկական զյուտ համարել կոմիտասագիտության բնագավառում: Չնայած ժամանակակիցների վկայությանը, Եմի Արգարի մեղեղիներին Կոմիտասի դիմելու փաստը հայ երաժշտագիտության մեջ մինչ այժմ կասկածի է ենթարկվել և նույնիսկ ուղղակի ժխտվել: Ո.Աքայանը ցույց տվեց, որ դա այդպես չէ:

Այդ հայտնագործության կարևորությունը կայանում է նախ և առաջ նրանում, որ մենք, ըստ Էության, գործ ունենք Կոմիտասի ամենավերջին ստեղծագործության հետ, որի վրա նա շարունակել է աշխատել նաև աքսորից վերադառնալուց հետո: Դա մեզ հնարավորություն է տալիս ներքափանցել կոմպոզիտորի ներքնաշխարհը, զգալ նրա հոգեվիճակը հատկապես այդ շրջանում, եթե նրա ճակատագրական հիվանդության նույնաները կրկնվում էին ավելի ու ավելի հաճախակի: Այս ստեղծագործության համակողմանի գնահատականն, իհարկե, ապագայի գործն է: Սակայն արդեն հիմա էլ ակնբախ է, որ նոր և հետաքրքրական էջ է բացվել Կոմիտասի ստեղծագործական կենսագրության մեջ:

Այս ստեղծագործության կապը Եմի Արգարի Պատարագի հետ միանգամայն անվիճելի է: Կոմպոզիտորի կատարած փոփոխությունները վերաբերում են հիմնականում մեղեղիների չափա-կշռութային կողմին: Բայց դա էլ բավականին եղավ, որպեսզի դրանց վերադարձը ազգային որոշակիությունը և արտահայտչականությունը:

Էջ 100 (622/3) ԷԱ, հ 1, էջ 22-33. «Խորհուրդ խորին», պահպանվել է սկզբի տարրերակը, գրված խառը երգչախմբի համար.

5. [♩ = 66]

Էջ 101 (466/42) էմի Արգարի Պատարագում սկզբնադրյուրը չհաջողվեց գտնել (դա բացառություն է, մյուս բոլոր դեպքերում մեղեղիական հիմքի նույնությունը Կոմիտասի և Էմի Արգարի մոտ ակնառու է): Այդ ոչ մեծ, ճրագեղ խմբերգը առանձնանում է իր լուսավոր բնույթի շնորհիվ և հնչում է համարյա իբրև ժողովրդական երգ: Կոմիտասի ձեռագրում բոլոր ձայները չեն, որ լրիվ են գրված: Այնուամենայնիվ, դատ նմանության դրանք կարելի է լրացնել, ինչը և արվել է մեր կողմից: Լրացումները տրված են ավելի մանր ձայնանիշերով:

Էջ 102 (460/4,5,6), ԷԱ, հ.1, էջ 448-450: Համեմատության համար ստորև բերում ենք
Էմի Արգարի Պատարագի մեղեղին.

6.

Այս խմբերում ալտերի ձայնաբաժինը բացակայում է. թերևս Կոմիտասը չի հասցրել գրել, կամ թե ալտերի մոտ պառզաներ պետք է լինեն (Կոմիտասի կողմից չնշված, բայց ենթադրվող):

Էջ 104 (466/35), ԷԱ, հ.2, էջ 489. «Փառք Քեզ»:

«Քեզ, Տեսանկ» - ԷԱ, հ. 2, էջ 498.

էջ 105 «Տեր, ողորմեա» (ԷԱ, հ.2, էջ 498), «Եւ լմն հոգույդ Քում», «Առաջի քն Տեր», «Օրհիւալ է» (ԷԱ, հ.2, էջ 500-501):

Էջ 106 (448/58), ԷԱ, հ. 2, էջ 572, «Սուրբ, սուրբ»:

Ահա ԷԱ Պատարագից այդ մեղեղու սկիզբը.

7.

The musical score consists of four staves of music in common time, treble clef, and a key signature of one flat. The lyrics are written below the notes in Armenian. The first staff ends with a fermata over the note 'd'. The second staff begins with a fermata over the note 'd'. The third staff ends with a fermata over the note 'd'. The fourth staff begins with a fermata over the note 'd'. The lyrics are as follows:

Սուրբ,
սուրբ.
Տիր
զօ - թեանց: Լի
են
եր - կինք

Անկասկած, «Սուրբ, սուրբ»-ը Կոմիտասի այս վերջին Պատարագի գլուխգործոցն է: Էջ 110 (448/65թ, 65), ԷԱ, հ.2, Էջ 582. «Յամենայնի»:

էջ 111 (446/5,4,3,2), ԷԱ, հ.2, էջ 589. «Հոգի Աստուծոյ»:

Մնացել է անավարտ, կան ուղումներ (ցույց են տրված մանր ձայնանիշերով):

էջ 112 (460/ 10,10թ) ԷԱ, հ. 2, էջ 851. «Եղիցի»:

էջ 113 (466), ԷԱ, հ.2, էջ 853:

Գ. Գյողակյան

Չարականներ

էջ 114 (ՄԲ 423/9, 10,11) Ը, էջ 890: «Նորահրաշ պսակատը» շարականի մշակմանը Կոմիտասը դիմել է բազմիցս, սկսած պատանեկան տարիներից: Հրատարակվող տարբերակը, հավանական է, որ ամենավերջինն է և գրված է 1913-14 թթ.

էջ 116 (1337/1) Ը, էջ 690:

էջ 118 (466/24-26), Ը, էջ 167:

էջ 119 (448/77թ), Ը, էջ 675:

էջ 120 (468/1թ-2), Ը, էջ 912:

էջ 121 (ՄԲ 423/20-21), Ը, էջ 827:

էջ 121 «Սուրբ ես, Տեր» (459/2 և 354/2թ), Ը, էջ 921:

Գերմաներեն գրած իր հոդվածի երկրորդ մասում «Das Achttonsystem der Armenier» (1899 թ.) հանդիպում ենք նաև այս շարականի դաշնակված տարբերակին.

8.

Andante sostenuto e maestoso

Սուրբ ես, Տեր զօ - րու - թանց, որ բնա - կեալի ես ի յեր - կին
Եւ բա - րե - բա - նիս ի սըր - բոց բոց:

էջ 122 (ՄԲ 228/27 թ)

էջ 122 «Յօգնութիւն մեզ ժամանեա» (469/ 2) Ը, էջ 275:

էջ 124 «Սիր Քո հուր» (ՄԲ 423/17, 391/ 15 ա) Ժ, էջ 423:

Կ.Կոստանյանին Բեռլինից գրած նամակից (1896 թ.) հայտնի է, որ Կոմիտասը ժամերգության այս գեղեցիկ երգը մշակել էր երկճայն և քառածայն խմբերի համար (տես Խ.Ասմվելյանի «Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն», «Սովետական արվեստ», 1969, թ. 11, էջ 58):

Հրատարակվող տարբերակը, անշուշտ, ավելի ուշ շրջանի գործ է, հավանական է, արված է Կ.Պոլսում:

Գ.Գ.

ԵՐԳԱՍԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՄԻԱԶԱՅՆ)

Էջ 127(333 և 333ա) «Որ յանէից ստեղծեր»՝ Կոմիտասի անդրանիկ գրառումն է:
 Ունի տիտղոսաթերթ.

Օրինարիթին
 Հրեշտակապետացն Սիրայէլի և Գարբիէլի
 և
 ամենայն երկնային զօրացն
 Շարական Բկ
 ստեղի եղանակ
 (Սուրբ Էջմիածնայ ի հին գոյն)
 Զայնազրեալ
 ի Յովակիմ վարդապետ Ղամեքեան
 Վաղարշապատցոյ
 ի 1887 ամի
 Զեռամբ
 Աշակերտի Ե դասարանի Գեորգեան ճեմարանի
 Ս.Ա.Ս.Էջմիածնի
 Սողոմոն Գեորգեան Կուտինացւոյ
 ի Սուրբ Էջմիածին

Շարականը վերագրվում է Շնորհալուն, Կոմիտասի գրառումը զգալի չափով
 տարբերվում է Ն.Թաշճյանի ձայնագրումից (Ը, էջ 844):

Եկեղեցական եղանակներ (Կուտինա, 1892)

Էջ 129(337) Ժողովածուն կազմվել է Կուտինայում, մաքրագիր չէ, ունի մատիտով
 արված ճշտումներ և հավելումներ:

Առողջությունը վերականգնելու նպատակով Կոմիտասը 1892 թ. մայիսին մեկնում է
 իր ծննդավայրը՝ Կուտինա: Տասնմեկամյա բացակայությունից հետո վերադարձը
 ծննդավայր շատ հուզիչ էր: Ինչպես պատմում է ականատեսներից մեկը, «Եթե
 վերադառնում է Քեռքահիա, ողջագուրվում է իր հարազատների հետ և ապա մտնում է իր
 հայրենական սենյակը ու սկսում է լուս և զիմֆիկոր շոշափել ու փայփայել պատերն ու
 լուսամուտները և հետո մատների մեջ գորգուրանքով սեղմել այն փոքրիկ զանը, որից իր
 սիրասուն մոր կենդանազիրն էր կախված եղել տասնինգ տարի առաջ» («Էջմիածին»,
 1950, N 2-3, էջ 22):

Կուտինայում ապրած ժամանակը շատ բեղմնավոր եղավ: Այստեղ Կոմիտասը
 Պատարագի իր առաջին բազմաձայն մշակումները կատարեց, զրի առավ իր ծնողների և
 տեղի հայերի քուրքերեն լեզվով հորինած և հայ միջավայրում լայնորեն տարածված
 շուրջ 60 երգ, սկսեց ստեղծել հայ հոգևոր երգասացությունների իր առաջին ժողովածուն:
 Պոլսում կարճատև գտնվելու ժամանակ նա հանդիպեց Հովսեփ Շանիկյանին և նրա
 կատարումից զրի առավ առաջին տաս Ակնա երգերը:

Աշխատանքն այդ ուղղությամբ շարունակվեց նաև Էջմիածին վերադառնալուց
 հետո: Արդեն նոյն թվականի դեկտեմբերին նա մարուր արտագրում է և «Արևելյան
 թրբական եղանակներ» ընդհանուր վերնագրի տակ մի տետրի մեջ հավաքում
 Կուտինայում գրառված երգերը: Հետզիւտե սրբագրվում և համալրվում էին Ակնա
 ժողովրդական երգերը, որոնք 1895 թվին հրատարակվեցին իբրև Հ.Շանիկյանի
 «Հնությունն Ակնա» գրքի հավելված(25 երգ): Անկասկած, նման աշխատանք տարվում էր
 նաև հոգևոր երգասացությունների ժողովածուի ստեղծման ուղղությամբ:

Երկրորդ նմանատիպ ժողովածուն թվագրված է 1893 թ. մարտ ամսով: Երկու
 ժողովածուների համեմատությունը բացահայտում է դրանց անվիճելի ընդհանրությունը:

1892 թվականի ժողովածուն (Կոտինա) քաղացած է 13 նմուշներից. դրանք միաձայն խմբերգեր են, մեներգեր, սարկավագի եղանակավոր քարոզներ Պատարագից և Ժամագրից: Գրառումը կատարված է հայկական ձայնանիշներով:

1. Միաշաբաթ օր համագութեան (ծանր. Սուլինար, տաղ հարութեան)
2. Կեցն Տէր, շնորհեա Տէր (ծանր, Դձ)
3. Ամէն. եւ ընդ հոգւոյդ Քում (ծանր)
4. Ամէն. Հայր սուրբ (ծանր, բասր)
5. Միայն սուրբ (ծանր, Նէհաւէնդ)
6. Ամէն. Հայր սուրբ (ծանր, Հիճազ և Նէհաւէնդ)
7. Ամէն. Հայր սուրբ (ծանր, Մուհայեր)
8. Տէր ողորմեա (ծանր, Աճեմ, Աշրամ)
9. Եւ եւս խաղաղութեան (միջակ)
10. Եղիցի անուն Տեառն օրինեալ (չափաւոր)
11. Ժագաւորեսցէ Տէր (ծանր. Գձ դարձ.)
12. Փառք յարութեան քո Տէր (չափաւոր, Գկ եւ նաև «Փ գիշերի» հատվածը Աձ դարձ.)
13. Ով Հայր Աստուած (ծանր, Նէհաւէնդ)

Այս եղանակների մի մասը հայտնի է նաև Ն.Թաշճյանի գրառմամբ: Դրանք են թ. 1 - Պ, էջ 113, թ. 5 - Պ, էջ 91-93, թ. 9 - Ժ, էջ 276-277, թ. 10 - Ժ, էջ 281, թ. 11 - Ժ, էջ 283-284, թ. 12 - Ժ, էջ 284-285.

Կոմիտասի գրառումները այս երգասացությունների բոլորովին նոր տարրերակներ են ներկայացնում և այդ իսկ պատճառով արժանի են առանձնահատող ուշադրության: Սովոր չափով դա վերաբերում է թ. 2-8 միավորներին, որոնք գրված են Պատարագի կանոնիկ գրական տեքստի հիման վրա, սակայն առանձնանում են իրենց ինքնուրույն և յուրօրինակ երաժշտական ոճի շնորհիվ: Դրանք իրենցից ներկայացնում են բարդ, զարդարանքներով հարուստ մեղենային ոճի նմուշներ, որ վկայում է դրանց ուշ միջնադարյան ծագման և արևելյան հարևանների երաժշտության հետ եղած կապի մասին: Ամենայն հավանականությամբ, դրանք հայ եկեղեցական երաժշտության հատկապես այն նմուշներն են, որոնք այն ժամանակ կենցաղավարում էին Կոտինայում և բուրքական Հայաստանի որոշ գավառներում: Ընդհանուր արևելյան երաժշտական ավանդույթների հետ ունեցած նրանց կապի մասին վկայում է նաև մեղեղիների ծայնեղանակների նշումը, ինչպես դա ընդունված էր Սերձավոր Արևելքում (Մուհայեր, Հիճազ, Բասր և այլն): Սակայն Կոմիտասի ստեղծագործական կյանքում դա միակ դեպքն է: Հետագայում նա օգտագործել է ձայնեղանակների միայն հայկական նշումները (Աձ, Ակ, Բձ և այլն):

1892 և 1893 թվականների ժողովածուները՝ հայկական նոտանիշներից փոխանցված եվրոպականի, առաջին անգամ հրատարակվել են Ն.Թահմիջյանի կողմից (տե՛ս Հայաստանի ԳԱ-ի «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1990, թ. 2, էջ 53-73; «Կոմիտասական» (ժողովածու), հատ. 2, Երևան, 1981, էջ 83-115):

1892 թվի ժողովածուի հրապարակման ադբյուր են ծառայել Կոմիտասի դիվանում թ. 337 ծրարի մեջ պահպող նյութերը: Սակայն, գիտնականի տեսադաշտից դուրս է մնացել այն հանգամանքը, որ թ. 337 ծրարը ժողովածուի ամբողջ նյութը չէր պարունակում: Ինչպես պարզվեց, այդ ժողովածուի շարունակությունը, հավանաբար պատահմամբ, հայտնի էր ուրիշ՝ թ. 340 ծրարի մեջ: Այն, որ այդ ծրարից հոգևոր երգերի գրառումներ պարունակող երկու թերթերը 1892 թվին Կոտինայում կազմած ժողովածուի մասն են հանդիսանում, ոչ մի կասկած չի հարուցում: Դրանք գրված են նույն բորբի վրա և նույն կերպ, ինչպես որ թ. 337 ծրարի գրառումները: Այդ թերթերը պարունակում են՝ «Ժագաւորեսցէ Տէր», «Փառք յարութեան քո Տէր» և «Ով Հայր Աստուած» եղանակները: Եթե ի նկատի ունենալ, որ 1892 թվականի ժողովածուի վերջին երեք միավորները (թ. 337 ծրարից՝ «Տէր ողորմեա», «Եւ եւս խաղաղութեան», «Եղիցի անուն Տեառն օրինեալ») նույն հաջորդականությամբ, համարյա անփոփոխ արտագրվել են Կոմիտասի կողմից 1893 թվի ժողովածուի մեջ, ապա ակնհայտ է դառնում, որ 1893 թվի ժողովածուում դրանց հաջորդող միավորները՝ «Ժագաւորեսցէ Տէր» և «Փառք յարութեան քո Տէր» նույնպես

վերցված են եղել Կուտինայում արված գրառումներից, որոնք հայտնվել են թ. 340 ծրարի մեջ: Այդ ծրարի վերոհիշյալ երկու թերթերի պատկանելությունը 1892 թ. գրառումներին ապացուցվում է նաև «Ով Հայր Աստուած» մեղեդու ծայնեղանակի նշման՝ իբրև Նեհաւենի: Զայնեղանակների ընդհանուր արևելյան անվանումների օգտագործումը, ինչպես վերը նշվեց, Կոմիտասի ստեղծագործության մեջ հանդիպում է միայն Կուտինայում արված գրառումներում: Մնում է միայն ավելացնել, որ 1893 թ. ժողովածուի ձեռագիր վերջին՝ 15-րդ էջում ավարտող «Փառք յարութեան քո Տէր» երգի մաքրագիր տարրերակում բացակայում է «Ծ զիշերի» հատվածը, որն առկա է թ. 340 ծրարի թերթերում: Բացակայում է նաև «Ով Հայր Աստուած» երգը: Ինչո՞ւ է այդպես ստացվել, հիմա դժվար է ասել: Կարելի է միայն ենթադրել, որ 1893 թ. ժողովածուի (Էջմիածին) ձեռագիրն ամբողջությամբ մեզ ուղղակի չի հասել, կամ՝ մեզ անհայտ ինչ-ինչ պարագաներ խանճարել են Կոմիտասին շարունակելու աշխատանքը այդ ժողովածուի վրա: Այլ կերպ հնարավոր չէ բացատրել, թե ինչո՞ւ «Փառք յարութեան քո Տէր» երգի գրառումը 1893 թ. ժողովածուում թերի վիճակում է:

Վերև արդեն նշվեց 1892 և 1893 թթ. ժողովածուների մոտիկության փաստը: Իսկապես, 1893 թ. ժողովածուի մեջ տեղ գտած 15-ից 7 միավորը վերցված են նախորդ ժողովածուից: Դրանք են.

թ.8- «Սիաշաբաք օր հանգստեան»

թ.9- «Կեցն Տէր, շնորհեա Տէր»

թ. 10 - «Տէր ողորմեա» (ծանր, Բկ)

թ.12 - «Եւ եւս խաղաղութեան»

թ.13 - «Եղիցի անուն Տեան օրինեալ»

թ.14- «Ծագաւորեսցէ Տէր յախտեան»

թ.15- «Փառք յարութեան քո Տէր» (կիսատ, առանց «Ծ զիշերի» հատվածի)

Կրկնել միևնույն միավորները երկու ժողովածուներում մենք նպատակահարմար չհամարեցինք, այդ պատճառով էլ 1892 թ. ժողովածուից հանված են այն միավորները, որոնք Կոմիտասը հարկ է համարել մաքրագրված և խմբագրված վիճակում զետեղել 1893 թ. ժողովածուի մեջ (թ.թ- 10, 12, 13, 14, 15): Բացառություն կազմեցին միայն 2 միավոր, որոնցով սկսվում է 1892 թ. ժողովածուն և որոնց մեջ որոշակի ինտոնացիոն տարրերություններ կան (ճշտ է ամենան): Բացի դրանից, 1892 թվի ժողովածուի մեջ են մտցվել 1893 թ. ժողովածուի մեջ բացակայող «Ծ զիշերի» հատվածը և «Ով Հայր Աստուած» երգ-աղորքը:

Եջ 139 (340) Ինչպես վերը նշվեց, դա «Փառք յարութեան քո Տէր» երգի շարունակությունն է:

Եջ 140(340/2թ) Ո.Աքայանը բնութագրում է այս եղանակը որպես «արտաարարողական աղորերգ»:

Եկեղեցական եղանակներ (Էջմիածին, 1893)

Եջ 141(332) 1893 թ. ժողովածուն գրված է մի տետրի մեջ, որում օգտագործված են 9 թերթ, ներառյալ տիտղոսաբերքը.

Հոգևոր եղանակներ

Հավաքեց

Սողոմոն Ա.Սարկաւագ Սողոմոննեանց

միարան Ա.Էջմիածնի

1893 թ., 24 մարտի

Ա.Էջմիածնում

Չեռագիրը կատարված է ամենայն խնամքով և շատ գեղեցիկ: Հավանաբար, դա Կոմիտասի ամենագեղեցիկ ձեռագրերից մեկն է: Այն սերը, որով ստեղծված է ձեռագիրը, վկայում է այն մասին, որ Կոմիտասը դրան մեծ նշանակություն է հատկացրել և, հավանաբար, պատրաստել է հրատարակության: Սակայն, ինչպես և մյուս շատ դեպքերում, նրա ցանկությունը չի իրականացել:

Ժողովածուի մեջ, ինչպես վերն արդեն նշվել է, տեղ են գտել 7 միավոր նախորդ ժողովածուից: Հոգևոր երգասացությունների ժողովածու կազմելու միտքը ծագել է առաջին անգամ Կոմիտանյուն: Վերադառնալով Էջմիածին, նա որոշել է լրացնել ավելի վաղ կատարված իր գրառումները: Նոր ժողովածուն, ըստ երևույթին, պետք է հանրագումարի բերեր այն ամենը, ինչ արված էր այդ բնագավառում:

